

ՀԱՂՈՐԴԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՆԵՆՈՒՄ

ԿԱԶՄԻԿ ԲԱԴԻԿՅԱՆ

Խոսքը սովորաբար կառուցվում է լեզվի մեջ գոյություն ունեցող բառերի ազատ կապակցությամբ՝ ելնելով տվյալ լեզվի ձևաբանական ու շարահյուսական օրենքներից ու կանոններից։ Օրակայն երբեմն էլ մարդիկ իրենց խոսքի ուժը սաստկացնելու, այն ավելի դիպուկ ու պատկերավոր դարձնելու նպատակով գործածում են որևէ անձի, առարկայի կամ երևույթի համար տվյալ պահին համապատասխան, լեզվի մեջ արդեն գոյություն ունեցող, հասարակության անդամների կողմից արդեն ընդունված ու արժեքավորված դարձվածային այնպիսի կապակցություններ, որոնք հաղորդակցման արժեք ունեն՝ թեև բառերի ազատ կապակցությամբ չեն կազմվում։ Դրանք, այսպես կոչված փակ կառույցներ են¹, պատրաստի վերարտադրելի միավորներ, որոնցում նույնպես գործում են ձևաբանական այն բոլոր հարաբերությունները, որպիսիք կան նախադասությունների մեջ։ Օրինակ, խնդրառություն, համաձայնություն, շարահյուսություն, հոլովման ու խոնարհման հարաբերություններ, սակայն դարձվածների մեջ սրանք մեծ մասամբ քարացած, հնացած են²։ Դարձվածային նախադասություններում առկա են նաև եզանակավորման, ժամանակի, դեմքի, թվի, հաստատման-միտման ձևաբանական կարգերը³։ Ուրեմն, լեզվի մեջ դարձվածային միավորները հանդես են գալիս ոչ միայն բառագիտության ու ձևաբանության մակարդակներում, այլև շարահյուսական համակարգում որպես լեզվի հաղորդակցական մակարդակի իմաստակիր միավորներ՝ օժտված սովորական նախադասությամբ հատուկ կական հատկանիշներով ու ձևաբանական կարգերով։

Նախադասության տիպի դարձվածները հայերենում բավական մեծ տարածում ունեն և դարձվածաբանության ենթահամակարգում առանձնանում են իրենց իմաստային, ձևաբանական ու կառուցվածքային առանձնահատկություններով։ Դարձվածաբանության հարցերով զբաղվող լեզվաբանների մի մասը թեև խոսում է նախադասության արժեք ունեցող դարձվածների մասին, սակայն ոչ բավարար չափով է դրանք սահմանադրում մյուս կայուն բառակապակցություններից, լրիվ չի ներկայացնում հաղորդակցական արժեք ունեցող դարձվածների իմաստային և առավելապես կառուցվածքային տիպերը, ձևաբանական կարգերն ու առանձնահատկությունները, ինչպես նաև սովորական նախադասություններից դրանց տարբերակման հատկանիշները։ Այժմ անդադառնանք այս հարցերին։

Նախ՝ հաղորդակցման արժեք ունեցող դարձվածային միավորները (այսուհետև՝ ԴՄ) իսկապես՝ նախադասություններ են, բավարարում են նախադասություններին ներկայացվող պահանջները, օժտված են այն ձևաբանական կարգերով, ինչ ունեն նախադասությունները։

Ինչպես ամեն մի սովորական (բայական թե անվանական), այնպես էլ դարձվածային նախադասություններին (այսուհետև՝ ԴՆ) ամենից առաջ ներհատուկ է օտոբոգությունը, որպես նախադասության իմաստային կենտրոնի, նրա ամենաէական հատկանիշի⁴։ Առանց ստորոգման նախադասություն գոյություն չունի⁵։ Վտորոգումը ներկայացնում է սուբյեկտիվ մտածողական-հաղորդակցական պրոցեսների օբյեկտիվ բովանդակությունը... ստորոգումը աշխարհի պատմողական ճանաչումն է, որն իր խորքային մակարդակում համընկնում է տրամաբանական դատո-

¹ «Русская грамматика», т. 2, М., 1980, с. 85.

² Վ. Առաքելյան, Ավ. Իսահակյանի պոեզիայի բառապաշարի ձևաբանական առանձնահատկությունները, Երևան, 1954, էջ 110։

³ Գ. Բ. Զահակյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974։

⁴ Ն. Ա. Պառնասյան, Նախադասության ձևաբանական կարգերը ժամանակակից հայերենում, Երևան, 1986։

⁵ Э. Бенвенист, Уровни лингвистического анализа («Новое в лингвистике», М., 1965, с. 446—447).

զուլթյանը՝ Եվ իսկապես, նախադասությունը նախ բայական բառակապակցություն է՝ լրացված ստորոգումով⁷։ Այսպես՝ խոփը քարին զննել դարձվածք զուտ բայական բառակապակցություն է, այն միտք չի արտահայտում, չունի հաղորդակցական արժեք, որովհետև չկա հաղորդված բովանդակության վերադրում իրականությանը, չկան գործողությունը և նրա կատարողը, այսինքն բացակայում է ստորոգումը։ Մինչդեռ խոփը քարին է զննել առնել դարձվածքով խոսողը արդեն միտք է արտահայտում, դատողություն է անում իրականության վերաբերյալ։ ստորոգման շնորհիվ բայական բառակապակցությունը վեր է ածվել նախադասության, այսինքն՝ այն ձևեր է բերել հաղորդակցական իրադրության դրսևորում։ Նշ՝ որ բացառությամբ իր սկզբնական ձևով մի տեսակ կամուրջ է՝ նեղված լեզվական և արտալեզվական աշխարհների միջնաձի։ Այդպես էլ բայական ՊՄ-ները ստորոգման շնորհիվ հեշտությամբ վեր են ածվում դարձվածային նախադասությունների շմամտ։

բայական ՊՄ-ներ

Քիրը սրբելու ժամանակ շունենալ։
Ձուկը գլխից բռնել։
Շան քթից ջուր խմել։
Եղբայրի ծայրը շառժենալ։
Մի կտոր հացի տեղ զանալ։

Նախադասություն ՊՄ-ներ

Քրքը սրբելու ժամանակ շունի։
Ձուկը գլխից են բռնում։
Շան քթից ջուր խմեցի։
Նղունգից ծայրը շառժի։
Մի կտոր հացի տեղ է դարձնել։

Նեղվում կան շատ ՊՄ-ներ, որոնք ձևավորվել են հենց նախադասությունների կառուցվածքով, և հնարավոր չէ դրանք գործածել առանց ստորոգման, որպես բայական կապակցություններ։ դրանք հանդես են գալիս թե՛ պարզ, թե՛ բարդ նախադասությունների կառուցվածքով և լինում են տարբեր բնույթի՝ պատմողական, հարցական, հրամայական, ինչպես նաև ժխտական տիպի։ Ահա մի քանի օրինակ։ Պատերը ակնաչու ռենդ։ Այն ապուր զնն շառ ջուր կվեցցի։ Կերած ապուր տես։ Օսին նայի, օձը կզատի։ Կուժ քեզ կառնեմ, կուլա, դու լսի՛ր։ Մոխ չես կերել, սիրտ ինչո՞ւ է մտնում և այլն։

Դժվար չէ նկատել, որ նման տիպի դարձվածային նախադասություններում ստորոգումը արտահայտվել է բայի ձևաբանական կարգերով (դեմք, թիվ, եղանակ, ժամանակ), իսկ անվանական դարձված-նախադասություններում ստորոգումն արտահայտվում է հանգույցի շնորհիվ՝ Պատեր ծակ է։ Փռնված քանը անփռն մածնից լավ է։ Հասա ու բարակ մի զին է։ Բանը բուրդ է։ Նրա երգը արգեն երգված է։ Հակուն տանը չէ։ Մեջքը պինդ է և այլն։

Ստորոգման հատկանիշներով են օժտված ոչ միայն բայական ու անվանական երկկազմ դարձված-նախադասությունները, այլև դարձվածային միակազմ նախադասությունները, որոնցում այն դրսևորվում է ոչ թե ձևաբանական կարգերով ու հանգույցներով, այլ՝ ճշգրտագույնով։ Եթե ստորոգումը հատկանիշը վերագրում է առարկային, մի բան, որ շատ էական է նախադասության համար, ապա նախադասության հենքերանգը ձևավորում է մտքի ավարտվածությունը⁸։ Ուրեմն, նախադասության կնիքն ու էական հատկանիշներից է նաև ճշգրտագույնը, որը մի ամբողջության մեջ է առնում նախադասություն կազմող միավորները՝ առանց քերականական ձևական փոփոխությունների։ Հենքերանգը նույնիսկ հաղորդակցական արժեք չունեցող ՊՄ-ներին էլ մարդու ներքին դատողություններ արտահայտելու հնարավորություն է տալիս։ Այսպես՝ խոսելիս, ելնելով խոսքային կոնկրետ իրավիճակից, խոսակիցները կամ գրողը հաճախ կարճում են խոսքը, աշխատում են քիչ բառերով շատ բան ասել, մանավանդ երբ ցանկանում են, որ իրենց խոսքը, հատկապես պատասխանները, պատկերավոր ու արտահայտիչ լինեն։ հաղորդակցվողները կամ գրողը նման դեպքերում դիմում են այնպիսի դարձվածների, որոնք միակազմ կամ թերի նախադասությունների արժեք ունեն։ Այսպիսի նախադասությունները լեզվաբանական գրականության մեջ անվանվում են «կոնկրետ կամ ճշգրտագույն» նախադասություններ (свертывание)¹⁰։

6 է. Ռ. Աթալյան, լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերություններ, Երևան, 1981, էջ 193։

7 Գ. Բ. Զահրաբյան, Նշվ. աշխ., էջ 333։

8 է. Ռ. Աթալյան, Նշվ. աշխ., էջ 202։

9 Ս. Գ. Արաբաբյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1975, էջ 262։

10 В. А. Звегинцев, Предложение и его отношение к языку и речи, М., 1976, с. 288.

Բերենք դրանցից մի երկու օրինակ. «Մասիսյանը այն տեսակ մարդկանցից էր, որոնց մասին ասում են՝ տանը ստանա, դուրսը փախանա» (Րաֆֆի, Երկերի ժողովածու, Հ. 3, Երևան, 1955, էջ 397)։

— Հետաքրքիր է, մեր Սևադայի տունը հիմնարկից շա՛տ է հեռու, որ միշտ աշխատանքից ուշանում է։

— Քթի տակ։

Սևադան նոր բնակարան է ստացել, ընկերները դիմում են նրան.

— Իրերդ շա՛տ են, մեքենայի կարիք կա՞ւ։

— Մի աֆլուրի քեռ... («Գարուն», 1982, № 12)։

Ընդգծված դարձվածները իսկապես նախադասություններ են, որովհետև ավարտուն հնչերանգով են արտաբերվել, ունեն ներքին ստորոգում և դատողություններ են. Այսպիսի նախադասությունների արժեքով կարող են հանգես գալ նաև հետևյալ բայական անդամ նախադասություն-դարձվածները՝ Բախտին ֆառ գցել։ Մեծ էջը փառառւմ թողնել։ Խոսքը կառուր գցել։ Եզր վերգ-նել, աակը հաքք փնտրել։

Առաջին հայացքից կարող է թվալ, թե բերված արտահայտություններում ստորոգում չկա, իրականում այն կա՝ միայն ոչ ձևաբանորեն արտահայտված։ Այսպիսի նախադասությունների մասին Ս. Արքաճանյանը գրում է. «Պետք է ընդունել, որ անդամ նախադասությունները ամբողջական ամփոփ նախադասության հատուկ հնչերանգ ունենալով՝ դրանով իսկ տվյալ բառակապակցությանը կամ բառին օժտում են նախադասության հատկանիշով, և ստորոգումն արտահայտվում է քերականական զրո միջոցով, այսինքն առանց քերականական վերջավորության կամ միջոցի»¹¹։

Նման ստորոգումը լեզվաբանական գրականության մեջ անվանվում է հնչերանգային կամ ներքին՝ հոգեբանական ստորոգում¹²։

Ստորոգման ու հնչերանգի հետ շատ սերտորեն առնչվում է նաև նախադասության մեկ ուրիշ կարևոր հատկանիշ, որը նույնպես վճռական գործոն է նախադասության առկայության համար. դա մաքի ավարտվածությունն է՝ մի հատկանիշ, որի մասին լեզվաբանական գրականության մեջ վերջերս ավելի շատ է խոսվում։ «Եթե բառերի դասավորվածության կամ թեկուզ մեկ բառի մեջ առկա է միտքը, ուրեմն կա և նախադասություն, իսկ եթե միտք չկա, չկա նաև նախադասություն»,— գրում է Վ. Զվեգինցևը¹³։ Ուրեմն, նախադասության էությունը պայմանավորված է նաև մտքի առկայությամբ ու ավարտվածությամբ։ Ինչ խոսք, որ մտքի ավարտվածությունը է օժտված հաղորդակցման արժեք ունեցող ցանկացած դարձված՝ լինի այն միակազմ, թե երկակազմ, լրիվ, թե թերի, պարզ, թե բարդ. դեռ ավելին՝ դարձվածային նախադասություններում ավելի տարողունակ միտք է արտահայտվում, քան սովորականներում։ Այսպես՝ շուրջ շաղիկ է հագել, կատուն՝ վառարիք դարձվածային նախադասության մեջ ավելի խոր միտք կա, քան մեծ բազմություն է հավաքվել կամ մեծ խառնաշփոթություն է տիրում սովորական նախադասություններում։ Եթե ստորոգման անդամները դարձված-նախադասությունը երկու մասի՝ շուրջ շաղիկ է հագել և կատուն՝ վառարիք (է հագել), դրանք առանձին-առանձին կապարեն միտք արտահայտելուց, թեև քերականորեն ճիշտ ձևավորված միավորներ են՝ իրենց ստորոգումով ու հնչերանգային ավարտվածությամբ. դրանք միայն միասնաբար հանգես գալու դեպքում են դառնում խոսքի իմաստակիր միավոր և միայն այդ դեպքում են ավարտված միտք արտահայտում ու ընկնում մտածական կապի ոլորտում։ Իսկ առանձին-առանձին դրանք մտածական կապից զուրկ են թեկուզ ոչ դարձվածային՝ իրենց ուղղակի իմաստով գործածվելիս, որովհետև իրականում ոչ շունն է շաղիկ հագնում և ոչ էլ կատուն՝ վառարիք։ Ահա այսպիսի՝ նախադասության սոսկ արտաքին կողմ ունեցող կապակցություններին է, որ Վ. Զվեգինցևը անվանում է կեղծ, սուտ, սխալ նախադասություններ (псевдопредложения)¹⁴։ Այսպիսով, որպեսզի դարձված-նախադասությունը իսկապես մտքի իմաստակիր միավոր դառնա ու կեղծ չհնչի, այն պետք է անպայման իմաստային հարաբերությամբ կապվի խոսքի շղթայի հետ, այսինքն դիսկուրսի¹⁵։

¹¹ Ս. Գ. Արքաճանյան, *Եզր. աշխ.*, էջ 265։

¹² В. В. Виноградов, *Русский язык*, М., 1947, с. 579—582; «Грамматика русского языка», т. 2, ч. I, М., 1954, с. 184.

¹³ В. А. Звегинцев, *Եզր. աշխ.*, էջ 177 և այլն։

¹⁴ Նույն տեղում, էջ 185—188։

¹⁵ Նույն տեղում։

մեջ մտնի և ոչ միայն նախադասության արտաքին կողմը՝ քերականական ձևավորվածությունը ապահովի, այլև բավարարի մտքի պահանջը, բխի նրա իմաստից, կապվի կոնկրետ իրադրության հետ: Եթե այս հատկանիշը անհրաժեշտ է սովորական նախադասության համար, ապա այն խիստ պարտադիր է դարձվածային նախադասությունը:

Նշված կարևոր հատկանիշները՝ ստորագծով, հենց անգ և մաքի ավարտվածություն, որոնք փոխադարձաբար պայմանավորված են իրարով ու լրացնում են միմյանց, պետք է համարել նախադասության էությունը, իսկ հղանկավորման, ժամանակի, դեմքի, հաստատման-միջավան քերականական կարգերը ածանցվում են այս հատկանիշներին և հանգեն են գալիս միայն որանց առկայության պայմաններում:

Թեև դարձվածային նախադասությունները նույնպես կազմվում են սովորականների համար գոյություն ունեցող նույն քերականական օրենքներով ու սխեմաներով, օժտված են նույն քերականական կարգերով ու օրինաչափություններով, սակայն մի շարք հատկանիշներով տարբերվում են նրանցից.

1. Դարձվածային նախադասությունները խոսելու ընթացքում առանձին բաղադրիչներից չեն կազմվում, ինչպես սովորականները, այլ խոսողի կողմից վերաբաշխվում են որպես խոսքային ամբողջական, պատրաստի բլոկներ¹⁶, որոնք մեծ մասամբ հանդես են գալիս լեզվի խոսակցական ոճերում, առավելապես երկխոսություններում, ունեն իրավիճակային բնույթ և բխում են անհրաժեշտության պահանջից: Այդ իսկ պատճառով էլ դարձվածային նախադասությունները մեծ մասամբ ունենում են իրենց նախադրյալ գործոններն ու դրապատճառները, որոնց համար իրենք հանդես են գալիս որպես մի տեսակ պարզաբանող, մեկնող կամ տեղեկատու շարահյուսական պատրաստի կառույցներ: Այսպես, քանի դեռ խոսք չի բացվել ինչ-որ իրավիճակի համար որևէ բանի հաղվադեպ ճարվելու, դժվար ձևեր բերվելու մասին, խոսողը չի հիշի ու վերարտադրի երազով ման գալիս՝ չես գտնի լեզվում պատրաստի գոյություն ունեցող դարձվածային նախադասությունը:

2. Ճիշտ է, վերարտադրելիությունը համոզիչ փաստարկ է ԴՄ-ի համար, բայց դա դեռ բավարար հիմք չէ այն լրիվ բնութագրելու: Վերարտադրելիության հետ սերտորեն կապված է նաև կայունությունը հանգամանքը: Դարձվածային նախադասություններն օժտված են իրենց բաղադրիչների քանակական և որակական կայուն կազմով, իմաստային կայունությամբ, քառային կազմի կայունությամբ, ինչպես նաև գործառնությամբ կայունությամբ: Սրանք բնութագրվում են նվազագույնը՝ երկու, առավելագույնը՝ ութից-տասը բաղադրիչային կազմով, միևնույն սովորական նախադասությունները կարող են ունենալ մեկ (Մթնց: Լուսացավ: Տոթ: Ամառ) և բազմաթիվ բաղադրիչներ: Սովորական նախադասություններ կազմելու ժամանակ խոսողն ազատ է բառերի և նրանց քերականական ձևերի ընտրության դեպքում՝ ելնելով քերականական կանոնների և բառերի իմաստային կապակցելիության օրինաչափություններից, միևնույն դարձվածայինները բնութագրվում են բառերի կազմի որակական և քանակական որոշակիությամբ, բառերի փոխաբերական իմաստներով ու քերականական կայուն ձևերով: Այս նշանակում է, որ դարձվածային նախադասություններում խոսողը կամ խոսակիցը, որպես կանոն, չեն կարող փոփոխել բառերը, նրանց քերականական ձևերը, իրենց ցանկությամբ կրճատել որոշ բառեր կամ նոր բառեր ավելացնել պատրաստի կառույցին՝ մի բան, որ ազատ հնարավոր է սովորական նախադասություններին դեպքում. սրանից էլ հետևում է, որ՝

3. Դարձվածային նախադասությունները հիմնականում անմիջապես են, որը պայմանավորված է դրանց բաղադրիչների՝ իրար նկատմամբ ունեցած իմաստային կապերի սերտությամբ ու անտարրադրելիությամբ. այսինքն՝ դարձվածային նախադասության (ինչպես նաև ամեն մի դարձվածային միավորի) իմաստը առաջանում է կապակցության բոլոր բաղադրիչների իմաստների գումարից. ավելի ճիշտ՝ այդ գումարի պարունակած միտքը ավելի մեծ է, ինչպես՝ 1+1>2-ից: Այսպես՝ զանազան ռեկորդներ են հասել դարձվածային նախադասության իմաստը առաջացնել է նրա երեք բաղադրիչների իմաստների գումարի վերաիմաստավորումից. բավական է սրա բաղադրիչներից մեկը փոխել, որ այն դադարի դարձված լինելուց, վերածվի սովորական նախադասության: ասենք՝ շունը ռեկորդներ են հասել: Մեծ մասամբ հնարավոր չէ նաև այս դարձվածային նախադասությունը որևէ բառ-լրացում ավելացնել. ասենք՝ ռուր զանազան է ռեկորդներ

¹⁶ Ի. Դ. Арутюнова, Предложение и его смысл, М., 1976, с. 83; Ж. М. Арутюнова, Фразеологические единицы со структурой предложения (автореферат канд. дис., М., 1981, с. 6).

ճասել կամ դաճակը շուր ռոկոռին է ճասել: Թերեւս հնարավոր է դաճակը վաղուց է ռոկոռին ճասել կառուցել, որը սակայն նույն կիրառությունն ու հաճախականությունը չունի, ինչ առանց վաղուց բառի Թեւ ընդունված է, որ դարձվածային նախադասությունները անմիջապահ են, որ նրանցում բաղադրիչների փոփոխություն կամ նոր բաղադրիչների ավելացում սովորաբար հնարավոր չէ, բայց, այնուամենայնիվ, դա հնարավոր է միայն մասնակի դեպքերում և (ի տարբերություն սովորական նախադասությունների) միայն որոշ դարձվածներում¹⁷, բայց որում փոփոխությունը պետք է կատարվի ոչ պատահական բառերով, այլ փոխարինվող բաղադրիչի իմաստով մոտ բառով, որը նորից վերաիմաստավորված արժեք ունենա և դարձվածի բաղադրիչ համարվի:

4. Դարձվածային նախադասությունները սովորականներից տարբերվում են նաև նախադասության կազմիչների շարադասությամբ, որը սերտորեն առնչվում է դարձվածի միջաբանիչությանը: Հայտնի է, որ ժամանակակից հայերենի սովորական նախադասությունների շարադասությունը հիմնականում ազատ է (մասնավոր դեպքերը նկատի չենք առնում), մինչդեռ դարձվածայիններում գոյություն ունի գրեթե միայն կայուն շարադասություն: Դարձվածային նախադասությունների բաղադրիչների շարադասության կայունությունը հիմնականում պայմանավորված է կառուցի կուռ լինելու և նրա բաղադրիչների իմաստային ամուր կապերի հանգամանքներով: Երկու Դ, որոնց իմաստազատողը լինի միայն շարադասությունը¹⁸: Այս միտքը հիմնականում ճիշտ է. կան միայն մասնակի բացառություններ: Այսպես՝ Աստված տա և Տա Աստված դարձվածային նախադասությունների իմաստները միայն շարադասությամբ են զանազանվում. առաջինը՝ Աստված տա, նշանակում է չկա, իսկ երկրորդը՝ Տա Աստված, նշանակում է երանքի քն: Եթե առաջինը ինչ-որ խոսքային միջավայրում կարող է նշանակել նաև երանքի քն, ապա երկրորդը ոչ մի դեպքում և խոսքային ոչ մի շրջապատում չկա չի նշանակում:

Նույնիսկ ռեալական առումով էլ գրեթե հնարավոր չէ դարձվածային կառուցներում բաղադրիչների տեղաշարժ կատարել. դեռ ոչ մի անգամ (նույնիսկ բանավոր խոսքում) չենք հանդիպել դաճակն է ռոկոռին ճասել, ռոկոռին է ճասել դաճակը կամ ռոկոռին դաճակն է ճասել և այլն: Այդպիսի կայուն շարադասություն ունի հայերենի դարձվածային նախադասությունների ճնշող մեծամասնությունը (Ջին գլխին ֆացի է տվել: Վիզը տանձի կոթ է դարձել: Նդունգի ծայրը չարժի: Ծան լեզու ունի և այլն):

5. Դարձվածային նախադասությունների քերականական առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ, ի տարբերություն սովորական նախադասությունների, սրանց բայով արտահայտված ստորոգյալը մեծ մասամբ զուրկ է լրիվ հարացայցից. ամբողջ կառուց-նախադասությունը դարձվածային իմաստով գործածվում է բայ գերադաս անդամի գրեթե միայն այն եզանակածամանակային ձևով ու դեմքով, ինչպես այն կաղապարվել է որպես դարձված: Այսպես, երեսին մեռու չկա: Տալած ֆարը գեանին չի մնա: Զուրն իր համբով կցնա: Ասեղ կերած շուն է դարձել դարձվածային նախադասությունները միայն այդպիսի տեսքով կարող են հանդես գալ (որոշ դեպքերում միտականները կարող են հանդես գալ նաև որպես հարցական նախադասություններ՝ երեսին մեռու չկա՞, երեսին մեռու կա՞: Տալած ֆարը գեանին չի մնա՞, Տալած ֆարը գեանին կմնա՞):

Նկատելի է, որ ավելի մեծ տարածում ու հաճախականություն ունեն բայի եզակի երրորդ դեմքով կաղապարված դարձվածային նախադասությունները (տե՛ս բերված օրինակները): Նման նախադասություններում բայը կարող է հանդես գալ նաև հոգնակի երրորդ դեմքով (Դրլ-լիքն ամպեր են կուտակվել: Գայլը գառին տաճ են տվել: Բոլոր նաճաղարհները Հոռո են տաճում):

Ավելի սահմանափակ թվով են հանդես գալիս բայի եզակի երկրորդ դեմքով կաղապարվող դարձվածային նախադասությունները (Այդ ֆարը փեշիցդ թափի՛ր: Անշուր տեղը մի՛ բարիկանա: Ականջիդ բամբակը ճանի՛ր: Ծան հետ ընկերացի՛ր, փայտը ձեռքիցդ մի՛ գցի՛ր):

Ասվածից և բերված օրինակներից, սակայն, չպետք է եզրակացնել, թե դարձվածային նախադասությունների բայ գերադաս անդամը խոնարհման լրիվ հարացույց ունենալ չի կարող: Հայերենում միայն մատների վրա կարելի է հաշվել այնպիսի դարձվածային նախադասությունները,

¹⁷ Պ. Ս. Բ և Գ ի ղ ա ն, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, 1973, էջ 171—177:

¹⁸ Նույն տեղում, էջ 169:

որտեղ հնարավոր լինի բայը գործածել բոլոր եղանակներով ու ժամանակներով և բոլոր դեմ-
քերով ու թվերով: Բերենք դրանցից մեկը. Ուղար գրավով շեն չրի դարձվածային նախադասու-
թյան բայ գերադաս անդամը, ըստ գործառական ոճի և խոսքի իրավիճակի, կարելի է գործածել
լրիվ հարացույցով՝

ՆԵՐԿԱ—Ուղար գրավով (եմ, ես, է, ենք, եք, եմ) չում:

ԱՆՑՑԱԼ—Ուղար գրավով չրեցի, չրեցիր, չրեց, չրեցիք, չրեցիք, չրեցիք:

ԱՊԱՆԻ—Ուղար գրավով (եմ, ես, է, ենք, եք, եմ) չում:

ՀՐԱՄԱՑԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ—Խնդրում եմ՝ ուղար գրավով մի՛ չրի:

ԸՂՋԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ—Դու մի սպասիր, տես ինչպես ուղար գրավով չում:

ՊԱՑԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ—Ուղար գրավով կչում:

ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ—Ուղար գրավով պետք է չում, ի՞նչ է:

Ե. Եվ վերջապես դարձվածային և սովորական նախադասությունների տարբերակիչ հատ-
կանիչ կարելի է համարել նաև այն, որ սովորական նախադասությունների դեպքում հնարավոր
է փոխակերպման փաստը. պարզ նախադասությունը կարելի է փոխակերպել բարդի և հակառա-
կը (եկել եմ, որ սովորեմ—> Եկել եմ սովորելու), իսկ բարդ ստորադասականը՝ դերբայական
դարձվածով նախադասության (Եթե ինձ հարցնեն, թե Երկիր մոլորակի վրա ամենից շատ որ-
տեղ կարելի է հրաշքների հանդիպել, ես առաջինը Հայաստանի անունը կտայի—Ռեֆուշ
Քենտ:—> Երկիր մոլորակի վրա որտեղ կարելի է ամենից շատ հրաշքների հանդիպելու մասին
ինձ հարցնելու դեպքում, ես առաջինը Հայաստանի անունը կտայի): Մինչդեռ դարձվածային նա-
խադասությունների դեպքում փոխակերպման փաստը բացառվում է. այսպես, Շուր շան բաթ
չի ծամի: Ատամիդ տակ մի բան կա: Քիթը արելու ժամանակ չունի դարձվածային պարզ նա-
խադասություններ ոչ մի կերպ չի կարելի փոխարինել դարձվածային բարդ նախադասությու-
նով: Այդպես էլ՝ Երեքսի բքե, կաթի անձրև և զալիս դարձվածային բարդ նախադասությու-
ններ չի կարելի փոխարինել Երեքսի բքելու գեղգելով, կաթի անձրև է զալիս գերբայական դարձ-
վածով նախադասությամբ կամ երկի դեռ ոչ ոք չի լսել, որ որևէ մեկը տալ չուտելու գեղգելով
սիրտը չի մեղմա կապակցությունը օգտագործի Սոխ շես կեռել՝ սիրտը ինչու՞ կմեղմա դարձ-
վածի փոխարեն:

Ահա հիմնականում սրանք են այն հատկանիշներն ու առանձնահատկությունները, որոնցով
դարձվածային նախադասությունները մի կողմից նմանվում են սովորական նախադասությու-
նին ու գրվում նույն մակարդակի վրա, իսկ մյուս կողմից տարբերվում են նրանցից ու կազմում
դարձվածաբանական ենթահամակարգի մի տեսակը:

КОММУНИКАТИВНЫЕ ФРАЗЕОЛОГИЧЕСКИЕ ЕДИНИЦЫ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ХАЧИК БАДИКЯН

Р е з ю м е

В языке фразеологические единицы реализуются не только на лек-
сическом и морфологическом уровнях, но и в синтаксической системе
языка в качестве семантических единиц коммуникативного уровня.
Последние обладают существенными признаками и грамматическими
категориями обычного предложения и в то же время характеризуются
некоторыми отличительными особенностями.